Տան տէրը չէր երեւում. չէր երեւում եւ ոչ ոք տանեցիներից, միայն մի քանի սագեր, որ դեռ նոր էին վերադարձել ծովեզրից, որոնում էին մի հովանաւոր տեղ՝ արեւի կիզող ճառագայթներից պատսպարուելու համար: Նրանցից մէկը դիմեց դէպի ուռիների տարածած ստուերը եւ կչկչալով, համեցէք անելով, իր ընկերներին ու ընկերուհիներին հրաւիրեց այնտեղ: Ամբողջ երամը հանգստացաւ սառն ստուերի ներքոյ, ուր արեւի կրակից եւ ոչ մի նշոյլ չէր թափանցում: Մենք դեռ բակում ման էինք գալիս, սպասում էինք տան տիրոջը:

Վերջապէս յայտնուեցաւ նա: Դա մի հաստաբազուկ, թիկնաւէտ, բարձրահասակ տղամարդ էր, արեւակէզ դէմքով, որի սուր, թափանցող հայեացքը կարծես նետի նման մեխւում էր մարդու սրտի մէջ: Գլխին դրած ունէր կապոյտ եւ կարմիր թելերով նախշած արախչին, հագել էր միայն հաստ, սպիտակ կտաւից շապիկ, որի նոյնպէս կապոյտ եւ կարմիր թելերով ասեղնագործած օձիքից երեւում էր թաւամազ, հզօր կուրծքը: Օրոայ ջերմութիւնը ստիպել էր նրան փոքր-ինչ զովութիւն տալ իր թոքերին: Մէջքը պնդած էր մետաքսեայ գօտիով, որից քարշ էր ընկած մի մեծ դանակ: Կապտագոյն շալոարը, վերեւից բաւական լայն, իսկ հետզհետէ սաստիկ նեղանալով, իջնում էր մինչեւ նրա ծնկները: Սրունքները մնացել էին բոլորովին մերկ. մերկ էին եւ ոտները: Հոլանի բազուկները ծալած էին մինչեւ արմունկները, երեւում էր, որ ծովեզրից էր գալիս եւ այնտեղ ջրերի հետ գործ էր ունեցել: Եւ իրաւ, այդ ամենատաղանդաւոր արձանագործի քերիչին արժանի տղամարդը պարապմունքով նաւավար էր, եւ նաւահանգստում կապած էր նրա սիրուն նաւակը:

Վարպետ Փանոսի հետ նա նախաճաշ էր երեւում. մօտեցաւ նրան եւ ինչ-որ խօսեց, բայց իմ եւ Ասլանի վրայ առանձին ուշադրութիւն չդարձրեց: Եւրոպացին նրան չէր զարմացնում, կարելի էր կարծել, որ նա եւրոպացիք շատ էր տեսել:

Վարպետի հետ իր խօսքը վերջացնելուց յետոյ նա անփոյթ կերպով մօտեցաւ մեզ եւ, առանց բարեւելու, ասաց.

— Այստեղ ինչո՞ւ էք կանգնած:

Նրա անքաղաքավարութիւնը, որ կոպտութեան էր հասնում, սաստիկ վիրաւորեց ինձ: Ասլանը ոչինչ չպատասխանեց: Պատասխանեց վարպետ Փանոսը իր սովորական ծիծաղով:

— Օրհնա՛ծ, ո՞ւր գնանք, ամբողջ ժամ սպասում էինք այստեղ, ոչ տան տէր էր երեւում եւ ոչ տան տիրուհի, որ մեզ մի տեղ ցոյց տար: